ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N

19 նոյեմբերիի 2024 թվական

Տեղի ունեցավ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու Ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակութային և երիտասարդական հարցերի մշտական հաձնաժողովի թիվ 06 նիստը: Նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Լիլիթ Ենգիբարյանը, Աննա Գևորգյանը, Իրինա Սիրունյանը, Հրայր Ասատրյանը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց <<ԼՈՒՔ>> ՍՊ ընկերության կողմից ներկայացված, ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ սահմանված ծրագրում ընդգրկված ՝ Խոյ համայնքի Ամբերդ բնակավայրի Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների իրականացմանը հարցը ՝ Խոյ համայնքի 2024 թվականի նոյեմբերի 22-ի ավագանու հերթական նիստում:

Նիստում քննարկվեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ բնակավայրի Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոցի կառուցման ծրագրի մանրամասները, ժամկետները, ինչպես նաև խոսվեց ծրագրի կարևորության մասին:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու Ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակութային և երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովը տալիս է հետևյալ եզրակացությունը՝

1. Տալ նախնական համաձայնություն <<ԼՈՒՔ>> ՍՊ ընկերության կողմից ներկայացված, ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ սահմանված ծրագրում ընդգրկված ՝ Խոյ համայնքի Ամբերդ բնակավայրի Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների իրականացմանը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
խմբակցության անդամ

Լիլիթ Ենգիբարյան

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
խմբակցության անդամ

Աննա Գևորգյան

ԱՆԴԱՄՆԵՐ՝
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
խմբակցության անդամ

Իրինա Սիրունյան

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
խմբակցության անդամ

Հրայր Ասատրյան